ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ 1828—1914 ԹԹ.

Խ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Սովետական Հայաստանի ներկա տարածքում քաղաքներ առաջացել են շատ վաղ անցյալում։ Մեր թվարկությունից առաջ հիմնադրվել են Էրեբունին (Երևանը), Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, մեր թվարկության սկզբներին՝ Վաղարշապատը, Դվինը։ Բայց տարբեր են եղել նրանց ճակատագրերը. այդ քաղաքներից մի քանիսը, որ տարբեր ժամանակներում հայտնի էին ամբողջ աշխարհում, հետագայում դադարել են գոյություն ունենալուց, իսկ մյուսները, կորցնելով իրենց վաղեմի փառքը, վերածվել են գյուղական բնակավայրերի կամ էլ դարձել են գավառական տիպի փոքրիկ քաղաքներ։

Հնագույն քաղաքներից ընդմիջումներով իր գոյությունը պահպանել է միայն Երևանը։ XV դարից սկսած աստիճանաբար զարգանալով ու բարգավաճելով նա դարձավ Երևանի խանության վարչական կենտրոնը։ Արտաքին և ներքին մի շարք հանգամանքների պատճառով Երևանը չկարողացավ հասնել նախկին մայրաքաղաքների փառքին, բայց նա ոչ միայն մնաց որպես կարևոր բերդաքաղաք, այլև դարձավ վարչական ու տնտեսական աչքի ընկնող կենտրոն[1]։

Երևանի տնտեսության մեջ առաջատար դեր էին խաղում երկրագործությունը, անասնապահությունը, զարգանում էր առևտուրը, արհեստագործությունը։ Երևանից արտահանվում էր գլխավորապես գյուղատնտեսական արտադրանք՝ օղի, գինի, միրգ, բամբակ։ XIX դարի սկզբներին մոտավորապես 15 հազար բնակիչ ունեցող Երևանը տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն էր։

Երևանի զարգացումը և նոր քաղաքների առաջացումը Սովետական Հայաստանի ներկա տարածքում տեղի է ունենում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո։ Չնայած ցարական կառավարության վարած գաղութացման քաղաքականությանը, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումը խոշոր առաջադիմական նշանակություն ունեցավ, խոր փոփոխություններ մտցրեց հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքում։ Ռուսական կայսրության կազմում Հայաստանը աստիճանաբար դուրս եկավ դարավոր հետամնացությունից, իսկ հետագայում ռուս ժողովրդի օգնությամբ հասավ սոցիալիստական հեղափոխության հաղթանակին։

Թուրքմենչայի նշանավոր պայմանագրով ներգաղթող հայերին որոշ արտոնություններ շնորհվեցին. հայրենիք վերադարձող գյուղացիները սահմանված քանակությամբ հող ստանալուց բացի, 6 տարով ազատվեցին հարկեր ու տուրքեր վճարելուց, 3 տարով՝ պարհակներ կատարելուց։ Նրանք իրավունք ունեին բերել իրենց շարժական գույքը կամ այն վաճառել տեղում։

---

1 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թվականը, Երևան, 1965։

Հայրենադարձները սկսեցին զբաղվել երկրագործությամբ, առևտրով, արհեստով։ Ներգաղթողների նկատմամբ ցարական կառավարության այդ միջոցառումների նպատակն էր կայսրությանը միացած նոր հողերը բնակեցնել ռուսներին համակրող բնակչությամբ և դրանով իսկ ամրապնդել երկրի հարավային սահմանները։

Կարճ ժամանակամիջոցում Հայաստան է ներգաղթում 57232 մարդ (այդ թվում Թուրքիայից՝ 21666 մարդ, Պարսկաստանից՝ 35566 մարդ), որից 42770-ը (Թուրքիայից՝ 19324 մարդ, Պարսկաստանից՝ 23446 մարդ[2]) բնակություն են հաստատում Սովետական Հայաստանի այժմյան տարածքում։ Ներգաղթողները մշտական բնակություն են հաստատում Արարատյան դաշտում, Ապարանում, Շիրակում, Լոռիում, Սևանի ավազանում, Զանգեզուրում։ Բնակչության ներհոսքը շարունակվում է նաև հաջորդ տասնամյակներում և ուժեղանում է հատկապես 1853—1856 և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, ինչպես նաև 1894—1896 թթ. Համիդյան կոտորածների տարիներին։

1840-ական թթ. միգրացիոն հոսքը սկսվում է նաև Հյուսիսից, երբ ցարական կառավարությունը Ռուսաստանի կենտրոնական սևահողային խտաբնակ շրջաններից Հայաստան է վերաբնակեցնում ռուս աղանդավորներին։ Վերջիններիս բնակեցնում են գլխավորապես մագիստրալային խճուղիների և լեռնանցքների մոտակայքում։ Ըստ 1886 թ. կամերալ ցուցակագրումների տվյալների, 1844—1885 թթ. ընթացքում Հայաստանում ստեղծվել է ռուսական 21 գյուղ, 1709 տնտեսությամբ և 11167 բնակչությամբ։ Բնակչության մշտական ներհոսքը փոփոխություններ է մտցնում Հայաստանի բնակչության սեռահասակային, ազգային կազմի մեջ, նպաստում բնակչության խտության բարձրացմանը, գյուղերի խոշորացմանը, նոր գյուղերի և քաղաքների առաջացմանը[3], արտադրողական ուժերի զարգացմանը, բնակչության գործունեության ծավալմանը գյուղատնտեսության, առևտրի և արհեստների բնագավառում։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումից հետո զգալիորեն առաջադիմում է Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքը, ձևավորվում են կապիտալիստական արտադրահարաբերությունները, հանդես են գալիս արդյունաբերական նոր ձեռնարկություններ՝ բամբակի, կաշվի մշակման, գինու, կոնյակի, մետաքսի արտադրության մեջ. արդյունաբերության մեջ մուտք է գործում ռուսական, ավելի ուշ՝ նաև ֆրանսիական կապիտալը։ 1860—1870 թթ. կառուցվում և բարեկարգվում են Թիֆլիս—Ղարաքիլիսա—Երևան—Ջուլֆա, Ղարաքիլիսա—Ալեքսանդրապոլ—Երևան, Նախիջևան—Գորիս խճուղիները[4]։ Հարյուրամյակի վերջում ծավալվում է նաև երկաթուղային շինարարությունը։ 1899 թ. ավարտվում է Թիֆլիս—Ալեքսանդրա-

---

[2] А. Бадалян. Население Армении со времен присоединения ее к России до наших дней, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 5, էջ 51։

[3] 1831—1897 թթ. Հայաստանի բնակավայրերի թիվը, առանց քաղաքների, ավելացել է 1,6 անգամ, 724-ից հասնելով 1150-ի։ Մեկ բնակավայրում ապրողների միջին թիվը 207 մարդուց բարձրացել է 610 մարդու, իսկ մեկ քառ. կմ. վրա ապրողներինը՝ 5,4 մարդուց հասել է 26,8 մարդու։

[4] М. Нерсисян, Присоединение Армении к России и его историческое значение, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 7, էջ 8։

պոլ—Ղարս, 1902 թ.՝ Ալեքսանդրապոլ—Երևան, 1906 թ.՝ Երևան—Ջուլֆա գծերի կառուցումը։ Ավելի և ավելի է մեծանում պղնձարդյունաբերության առաջատար դերը, Ալավերդիում ու Զանգեզուրում կառուցվում են պղնձաձուլական տասնյակ մանր գործարաններ։ 1913 թ. Հայաստանում ձուլվում է 5633 տոննա պղինձ, կամ Ռուսաստանում այդ տարի արտադրված պղնձի

Աշխատանքի ճյուղերը	1830 թ.		1897 թ.	
	Ընդամենը	տոկոս	Ընդամենը	տոկոս
Գյուղատնտեսություն	675	16,87	1012	8,39
Արդյունաբերություն	927	23,18	1781	14.77
Շինարարություն	36	0,90	340	2,82
Տրանսպորտ	87	2,17	350	2,90
Առևտուր և վարկ	603	15,09	1664	13,79
Հիմնարկներ (պետական և հասարակական)	100	2,56	659	5,46
Հոգևորականություն	91	2,25	102	0,85
Զինվորականներ	1000	25,00	2264	18,77
Մասնավորների մոտ ծառայողներ . .	74	1,8	2318	19,20
Այլք	407	10,28	1572	13,15
Ընդամենը	4000	100	12062	100

1/5 մասը[5]։ Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը (նախապատերազմյան գներով) 1900 թ. 10618,3 հազար ռուբլուց 1913 թ. հասնում է 20612,1 հազար ռուբլու[6], այսինքն կրկնապատկվում է։ Միաժամանակ ընդլայնվում է արտաքին և ներքին առևտուրը. Հայաստանը Ռուսաստան է ուղարկում գյուղատնտեսական արտադրանք՝ բամբակ, կաշի, չորացրած մրգեր, պահածոներ, շվեյցարական պանիր, ռուսական շատ քաղաքներում հայտնի են դառնում հայկական գորգերը։ Հայաստանը ռուսական շուկայից ներմուծում է արդյունաբերական ապրանքներ, սարքավորումներ, գյուղատնտեսական գործիքներ, շաքար, հացահատիկ և այլն։

Ռուսաստանի հետ Հայաստանի միավորումը միաժամանակ էական փոփոխություններ է մտցնում նաև քաղաքային կյանքում։ Առաջանում են նոր քաղաքներ, որոնք դուրս են գալիս նահապետական պարփակվածությունից։ Բարդանում են Երևանի՝ որպես նահանգի և գավառական կենտրոնի, վարչատնտեսական ֆունկցիաները։ Երևանում հետզհետե ավելանում է առևտրականների և արհեստավորների թիվը, որ կազմում է քաղաքի բնակչության զգալի մասը։ Բազմաղան արհեստների մեջ աչքի էին ընկնում կաշեգործությունը, ներկարարությունը, բրուտագործությունը, դարբնությունը, պղնձագործությունը, արծաթագործությունը և այլ ճյուղեր։ Մինչև 1880 թ. քաղաքի

5 Տե՛ս «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960», Երևան, 1960, էջ 93։

6 «ССР Армении в цифрах», табл. № 20, «Выполнение народнохозяйственного плана ССР Армении за 1933 г.», УНХУ ССР Армении, Ереван, 1934, էջ 13, 34։

արտադրությունը մնում է արհեստագործական շրջանակներում, գոյություն ունեցող «գործարաններն» ու «ֆաբրիկաները» տնայնագործական տիպի ձեռնարկություններ էին, որտեղ արտադրական պրոցեսները կատարվում էին գերազանցապես ձեռքով։ Վերևի աղյուսակում ամփոփված են Երևան քաղաքի ինքնագործ բնակչությանը վերաբերող տվյալները՝ ըստ աշխատանքի ճյուղերի և տարիների[7]։

Ինչպես երևում է բերված թվերից, 67 տարվա ընթացքում տնտեսության բոլոր ճյուղերում էլ զբաղվածների բացարձակ թիվը ավելացել է (օրինակ, արդյունաբերության մեջ աշխատողներինը՝ գրեթե 2 անգամ, գյուղատնտեսության մեջ՝ 1,5 անգամ, շինարարության մեջ՝ 9 անգամ, առևտրում և վարկում՝ 2,8 անգամ), բայց ամբողջ տնայնագործ բնակչության մեջ դրանց տեսակարար կշիռը ոչ թե ավելացել, այլ պակասել է մասնավոր մարդկանց մոտ ծառայողների թվաքանակն աճելու հետևանքով։

Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց, ի հաշիվ տնտեսապես քայքայված գյուղացիների և արհեստավորների, Երևանում աստիճանաբար ձևավորվում է նաև բանվոր դասակարգը, բայց, ցավոք, ցարական կառավարության պաշտոնական վիճակագրության մեջ այդ մասին ոչ մի վիճակագրական տվյալ չի տրված։

Ըստ 1897 թ. համառուսական մարդահամարի տվյալների, Երևանի բնակչության 7,4 տոկոսը կազմել են ժառանգական և անձնական ազնվականները, 1,2 տոկոսը՝ հոգևորականները, 0,7 տոկոսը՝ վաճառականները, 51,4 տոկոսը՝ արհեստավորներն ու առևտրականները, 27,9 տոկոսը՝ գյուղացիները, 7,3 տոկոսը՝ օտարահպատակները, 4,1 տոկոսը՝ այլ դասերին պատկանողները[8]։

Ռուսաստանի հետ միավորվելուց հետո Արևելյան Հայաստանի տարբեր մասերում առաջանում են նոր քաղաքներ։ Շիրակի կենտրոնում 1829—1830 թթ. Ղարսի ու Էրզրումի շրջաններից ներգաղթած 2500 հայ ընտանիքների մի մասը բնակություն է հաստատում Գյումրի գյուղի հարավային մասում տարածված դաշտում, Արփաչայ (Ախուրյան) գետի ձախ ափին։ 1837 թ. Գյումրիում հիմնադրվում է ամրոց։ 1840 թ. այդ բնակավայրը անվանվում է Ալեքսանդրապոլ, որը 1850 թ. դառնում է քաղաք և համանուն գավառի կենտրոնը։ Քաղաքի բնակչությունը զբաղվում էր առևտրով, արհեստներով (որմնադրությամբ, քարտաշությամբ, ատաղձագործությամբ, անագագործությամբ, դարբնությամբ, պղնձագործությամբ և այլն)։ Արհեստավորները համախմբված էին համքարական կազմակերպությունների մեջ. 1850-ական թթ. այստեղ կար 28 համքարություն, ուր ընդգրկված էին 2602 արհեստավորներ՝ վարպետներ, վարպետացուներ և աշակերտներ։ Քաղաքի տնտեսական վերելքը սկսվում է հաջորդ տասնամյակներում, որը կապված էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման և Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Ղարս երկաթգծի կառուցման հետ։ Այդ երկաթուղու շնորհիվ Ալեքսանդրապոլը դառնում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև կատարվող առևտրի կարևոր հանգույց։

1895—1900 թթ. Ալեքսանդրապոլում կային 435 առևտրական միավորներ, որոնց տարեկան շրջանառությունը հասնում էր 3,5 միլիոն ռուբլու։

---

7 Տե՛ս Զ. Կորկոտյան, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, Երևան, 1931, էջ 72։

8 «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года», LXXI (Эриванская губерния), Тифлис, 1905, էջ 2։

1905 թ. քաղաքի արդյունաբերությունը թողարկել է 90 հազար ռուբլու[9], իսկ 1910 թ.՝ 504 հազար ռուբլու[10] արտադրանք։

1828—1829 թթ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից ներգաղթած հայերը (650 տուն) բնակեցվում են Սևանա լճի հարավ-արևմտյան ափին գտնվող Քյավառ (Գավառ) գյուղում, որը Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու նախօրյակին գրեթե դատարկ էր։ Նոր Բայազետ վերանվանված քաղաքը 1850-ական թթ. դառնում է համանուն գավառի կենտրոնը։ Նոր Բայազետը աստիճանաբար զարգանում է, ավելանում է նրա բնակչությունը, մեծանում է արհեստավորների և առևտրականների թիվը։ Քաղաքի առևտրականներն ու արհեստավորները սերտ հարաբերությունների մեջ էին Թիֆլիս, Թավրիզ, Երևան քաղաքների հետ։ Քաղաքի բնակչության մի մասն էլ զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ։

1870-ական թթ. Եվլախ—Կյորիս—Սիսիան—Նախիջևան և Կյորիս—Ղափան խճուղիների խաչմերուկում, խոր ձորի մեջ, Վարարակ գետի աջ ափին, Կալեր կոչվող փոքրիկ հարթության վրա հիմնադրվում է նոր Գորիսը, որը դառնում է Զանգեզուրի գավառի կենտրոնը։ Հայաստանի հարավ-արևելյան մասի վարչաառևտրական և արհեստագործական կենտրոն Գորիսը XIX դարի 80-ական թթ. կեսերից վերանվանվում է քաղաք։ Նա ուներ երկդասյա դպրոց, ծածկած շուկա, «պասաժ» (որտեղ վաճառվում էին Ռուսաստանից բերված ապրանքներ), արդյունաբերական ձեռնարկություններ՝ լիմոնադի գործարան, «Սասուն» տպարան, 124 խանութ[11]։ Նա հայտնի էր նաև իր շուկայով։ Քաղաքի բնակչությունը զբաղվում էր հիմնականում հողագործությամբ և անասնապահությամբ։

Վերոհիշյալ քաղաքների աճին զուգընթաց ավելանում է նաև նրանցում եղած աշխատողների թիվը, ինչպես նաև ձեռնարկությունների թողարկող արտադրանքը։ Միայն երեք քաղաքում (Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ) 1889 թ. կար 197 արհեստագործական ձեռնարկություն, որտեղ աշխատում էին 846 բանվոր[12]։ 1900—1910 թթ. Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքների արդյունաբերության արտադրանքը աճել է 2,6 անգամ, 324 հազար ռուբլուց հասնելով 850 հազար ռուբլու[13]։

Բացի նշված քաղաքներից, ստեղծվեցին նաև արդյունաբերական կենտրոններ Ալավերդու և Ղափանի պղնձահանքավայրերի շուրջը։ Այդ կենտրոններում ձևավորվեց դարի ամենահեղափոխական ուժը՝ բանվոր դասակարգը, որը կարևոր դեր խաղաց Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարում։ Հանդես եկան նաև նոր խոշոր բնակավայրեր (Դիլիջան, Ղարաքիլիսա, Ջալալօղլի և այլն), որոնք, ինչպես և Ալավերդին ու Ղափանը, դեռևս քաղաքներ չէին, բայց իրենց արտադրական բնույթով մոտ էին քաղաքներին և կատարում էին քաղաքային ֆունկցիա։ 1897 թ. վե-

---

9 «Обзор Эриванской губернии за 1905 г.», т. 4.

10 Մ. Հ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 215։

11 Խ. Ա. Ավետիսյան, Զանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920—1960), Երևան, 1963, էջ 65։

12 Кавказский календарь 1893, Эриванской губернии, էջ 47։

13 Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 215։

ռոհիշյալ բնակավայրերում ապրում էին 15221 մարդ, իսկ 1914 թ.՝ 17664 մարդ։

Քաղաքների թվական աճին զուգընթաց ավելանում է և քաղաքային բնակչությունը, ինչպես այդ երևում է ստորև բերվող տվյալներից[14]։

Քաղաքներ	Բնակչության թիվը				
	1831 թ.	1873 թ.	1886 թ.	1897 թ.	1914 թ.
Երևան	11920	11938	14736	29006	29766
Ալեքսանդրապոլ	—	19976	24230	30616	51316
Նոր Բայազետ	—	5363	7488	8486	12630
Գորիս	—	—	—	1450	1608
Ընդամենը	11920	37277	46456	69558	95320

Այսպիսով, 1873—1914 թթ. ընթացքում երեք քաղաքների (Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ) բնակչությունն ավելացել է մոտավորապես 2,6 անգամ։ Ալեքսանդրապոլի մարդաշատությունը հետևանք է արհեստագործության զարգացման, Թուրքիայի հետ կատարվող առևտրի ակտիվացման, ռուսական զորքերի կենտրոնացման։ Կարևոր դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ Արևմտյան Հայաստանից ներգաղթած հայերի մի զգալի մասը բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլում։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախասովետական Հայաստանում ամբողջ բնակչության աճի համեմատությամբ քաղաքային բնակչության բնական աճը կատարվել է բավական դանդաղ։ Երևանի նահանգում 1891—1914 թթ. բնակչության տարեկան բնական միջին աճը 1000 բնակչի հաշվով կազմել է 13,4 մարդ[15], մինչդեռ Երևան քաղաքում 100 շնչին ընկել է 2 ծնունդ, 1,87 մահացություն, իսկ բնական աճը կազմել է 0,13 մարդ (կամ 0,13 տոկոս)։ 1886 թ. Երևանում ծնվել է 507 մարդ, մահացել՝ 326, 1896 թ. ծնվել է 590 մարդ, մահացել՝ 501, 1908 թ. ծնվել է 1169 մարդ, մահացել՝ 1026։ Բնական աճը համապատասխանաբար եղել է 181, 89 և 142 մարդ։ Բնական աճի ցածր մակարդակի պատճառը բարձր մահացությունն է, որը հատկապես նկատելի էր երեխաների մոտ. Օրինակ, 1886 թ. մահացել է ծնված երեխաների 64,3 տոկոսը, 1910 թ.՝ 87,8 տոկոսը[16]։ Բնական աճը ցածր է եղել նաև մյուս քաղաքներում։

Չնայած բնակչության ցածր բնական աճին, այնուհանդերձ քաղաքային բնակչությունը, ինչպես ցույց են տալիս հրապարակված թվերը, աստիճանաբար ավելացել է։ Դրա հիմնական պատճառը Հայաստան ներգաղթողների

---

14 Տե՛ս «Населенные пункты и население Армянской ССР в 1831—1959 гг.». Ереван, 1962, էջ 8—9, 27, 33, 56—57։

15 «ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչություն. վիճակագրական տեղեկատու», Երևան, 1925, էջ 13։

16 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), Երևան, 1963, էջ 185։

մի զգալի մասի՝ քաղաքային բնակավայրերում մշտական բնակություն հաստատելն է, այսինքն՝ մեխանիկական աճը։

Ցարական կառավարության տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի ներկա տարածքում գտնված քաղաքների բնակչության մեծամասնությունը հայերն էին։ Երկրորդ տեղը բռնում էին ադրբեջանցիները։ Ապրում էին նաև ռուսներ, ուկրաինացիներ, հույներ, լեհեր և այլն։ 1897 թ., համառուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն, քաղաքների բնակչությունը, ըստ ազգային կազմի, հետևյալ պատկերն էր ներկայացնում[17]։

Քաղաքները	Ամբողջ բնակչութ.	Այդ թվում									
		հայեր	ադրբեջանցիներ և մահմեդական.	ռուսներ	ուկրաինացիներ	հրեաներ	լեհեր	հույներ	թուրքերի	գերմանացիներ	այլ
Երևան	29006	12523	12359	2765	398	204	190	—	141	—	426
Ալեքսանդրապոլ	30616	21771	1090	4048	1087	415	921	266	127	316	575
Նոր Բայազետ	8486	8094	283	57	—	15	12	—	15	—	10
Գորիս[18]	1450	1078	215	78	57	1	—	12	—	—	8
Ընդամենը	69558	43466	13947	6948	1536	635	1111	285	283	316	1019

Աղյուսակից երևում է, որ քաղաքային բնակչության 62,5 տոկոսը եղել են հայեր, 20,1 տոկոսը՝ ադրբեջանցիներ, իսկ 12,1 տոկոսը՝ ռուսներ և ուկրաինացիներ։ Սակայն ադրբեջանցիների տեսակարար կշիռը եթե Երևանում հասնում էր 42,6 տոկոսի, մնացած 3 քաղաքներում նրանց տոկոսը անհամեմատ ավելի ցածր էր։

Համեմատաբար բարձր էր քաղաքային բնակչության գրագիտությունը (1897 թ.՝ 29,6 տոկոս), մինչդեռ նահանգի բնակչության գրագիտությունը նույն թվականին 6,4 տոկոս էր։ Նույն թվականին բնակչության գրագիտությունը Ալեքսանդրապոլում 33,1 տոկոս էր, Երևանում՝ 29,6, Գորիսում՝ 25,6, Նոր Բայազետում՝ 17,4 տոկոս։ Պետք է նկատի ունենալ, որ մարդահամարի ժամանակ գրագետ են համարել նաև նրանց, որոնք հազիվհազ գրաճանաչ են եղել։

Հետաքրքիր է, որ 1897—1914 թթ. ընթացքում լեռնային գոտում գտնվող քաղաքների (Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի) բնակչության տեսակարար կշիռը 56,2 տոկոսից հասել է 67,1 տոկոսի, իսկ ցածրադիր և նախալեռնային գոտիներում՝ 43,8 տոկոսից իջել է 32,9 տոկոսի։

Ստորև բերվող աղյուսակում ամփոփված տվյալները ցույց են տալիս, թե ինչ տեմպերով է ընթացել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի գլխավոր քաղաքների բնակչության աճը 1850—1914 թթ. ընթացքում[19]։

---

17 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года», LXXI (Эриванская губерния), էջ 52—30։

18 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года» (Елизаветопольская губерния), Тифлис, 1904, էջ 62։

19 Տե՛ս Զ. Կորկոտյան. նշվ. աշխ., էջ 37։

Քաղաքներ	Բնակչության թիվը			
	1850 թ.	1866 թ.	1897 թ.	1914 թ.
Բաքու (առանց հանքաշրջանի)	7431	86611	111904	248812
Գյանջա	10926	20294	33625	56305
Շուշի	12724	26806	25881	42568
Շամախի	19558	22139	20007	12527
Թիֆլիս	34888	78445	159590	344629
Քութայիս	2725	22643	32476	57917
Բաթում	—	14803	28508	38615
Ախալցխա	12374	16116	15357	23924
Երևան	12605	14734	29006	29366
Ալեքսանդրապոլ	11280	24230	30616	51316

Այսպիսով, 1850—1914 թթ. նշված 10 քաղաքների բնակչության ընդհանուր թիվը 124,5 հազարից հասել է 906,0 հազար մարդու, կամ աճել է 7,2 անգամ, այդ թվում Վրաստանի քաղաքներինը ավելացել է 9,3, Ադրբեջանինը՝ 7,1, Հայաստանինը՝ ընդամենը 3,3 անգամ։ Առանձին քաղաքներում ահի տարբերությունը եղել է ավելի մեծ. եթե Բաքու քաղաքի բնակչությունն ավելացել է 33,3 անգամ, Քութայիսինը՝ 21,2, Թիֆլիսինը՝ 8,8, Գյանջայինը՝ 5,2, ապա Երևանինը՝ ընդամենը 2,3 անգամ։ Ավելին, Երևանը, որն իր բնակչության թվով անցյալ հարյուրամյակի կեսերին Անդրկովկասում համարվում էր չորրորդ քաղաքը, 1914 թ. դարձավ ութերորդը։ Անդրկովկասում քաղաքային բնակչության անհամաչափ աճը բացատրվում է նրանով, որ Վրաստանում և Ադրբեջանում կապիտալիստական հարաբերությունները զարգանում էին ավելի արագ, քան Հայաստանում և այդ կապակցությամբ էլ, ի հաշիվ գյուղական բնակչության, աճեց նաև նրանց քաղաքային բնակչությունը։ Մյուս կողմից, տնտեսապես քայքայված հայ գյուղացին, աշխատանք չգտնելով իր երկրի ներսում, հարկադրված դիմում էր պանդխտության, անցնելով Անդրկովկասի արագ զարգացող քաղաքները՝ Թիֆլիս և Բաքու, ինչպես նաև Անդրկասպյան երկրներ և ռուսական մեծ քաղաքները։ Հողից կտրվելու հանգամանքը չէր հանգեցնում Հայաստանի քաղաքային բնակչության բուռն աճին, ինչպես այդ կատարվում էր Ադրբեջանում և Վրաստանում։ Ըստ հրապարակված տվյալների, 1903 թ. Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 27,9 տոկոսը (6600 մարդ)[20] եղել են հայեր։ Հայաստանի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 1897 թ. 12,2 տոկոսից 1913 թ. իջել է 10,4 տոկոսի[21], որը հետևանք է աշխատավոր ձեռքերի արտահոսքի։ Այսպես օրինակ, միայն Զանգեզուրի գավառում 1884 թ. 10 ամսում (չհաշված Ելիզավետպոլի նահանգի մյուս գավառներ մեկնածները) արտագնացության մեջ են եղել 2925 մարդ[22], իսկ առաջին համաշխարհային

20 Տե՛ս «Экономический вестник Армении», 1923, № 2, էջ 23։

21 Տե՛ս «Численность, состав и движение населения. Армянская ССР» (статистический сборник), Ереван, 1974, էջ 11։

22 «Նոր-Դար», 1885, № 139։

պատերազմի նախօրյակին Երևանի նահանգի գյուղերից տարեկան գնացել է 25 հազար մարդ, այդ թվում 2 հազարը մեկնել է արտասահման։ Նահանգի արտադնացողների 2/3-ը աշխատանքի են մեկնել Վրաստանի, Ադրբեջանի, Միջին Ասիայի, Հյուսիսային Կովկասի քաղաքները։ Պետք է ենթադրել, որ դրանց ենշող մասը եղել են երիտասարդ և միջին տարիքի տղամարդիկ։

Հայաստանում քաղաքների բուռն զարգացումը և քաղաքային բնակչության զգալի աճը տեղի ունեցավ միայն սովետական իշխանության տարիներին։ Նոր կարգերի հաստատումը արմատապես փոխեց հանրապետության հասարակական, տնտեսական կառուցվածքը, արտադրության բնույթն ու եղանակը և նպաստավոր պայմաններ ստեղծեց արտադրողական ուժերի զարգացման համար։ Ժողովրդական տնտեսության պլանային զարգացումը վերացրեց Հայաստանի տերիտորիայի վրա արտադրության և բնական ռեսուրսների միջև եղած պատմականորեն ստեղծված անհամաչափությունը։ Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի բնագավառում կատարված խոր վերափոխումները և կուլտուրական շինարարության մեծ ծավալը միաժամանակ ազդեցին բնակչության տեղաշարժերի վրա։ Փոխեցին բնակչության սոցիալական կառուցվածքը, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը։ Ընդամենը հինգ և կես տասնամյակների ընթացքում Սովետական Հայաստանի քաղաքային բնակավայրերի թիվն ավելացավ 14,2, իսկ բնակչությունը՝ 15,3 անգամ։ Ներկայումս մեր հանրապետությունում կա 21 հանրապետական ենթակայության, 3 շրջանային ենթակայության քաղաք և 33 քաղաքատիպ ավան, որտեղ ապրում է ՀՍՍՀ բնակչության շուրջ 64 տոկոսը։

РАЗВИТИЕ ГОРОДОВ НА НЫНЕШНЕЙ ТЕРРИТОРИИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1828—1914 гг.

Х. А. АВЕТИСЯН

(Резюме)

В статье освещается развитие населения существовавших и вновь возникших городов Восточной Армении после ее присоединения к России. Показаны рост численности населения, изменения в его национальном составе и характере занятий населения, вскрыты основные причины медленного развития городов и сравнительно небольшого увеличения численности их населения.